

## ԿԵԱՆՔԻ ՍԱՂՄՈՍԸ

(Առաջնական)

Ինձ մի՛ ասիր ք երգերում վետաւոր,  
Թէ մեր կեանքը լոկ երազ է անցաւոր.  
Ամեն բան էլ ունի իմաստ մի ներփին,  
Մեռած է նա, ում մէջ նիրհում է ոզին:  
Կեանքը կեղծիք եւ կատակ չէ կամ երազ,  
Մահ, գերեզման նպատակ չեն անկասկած:  
Այն խօսեր՝ „հող էիր դու, հո՞ղ դառնաս“,  
Քո այդ անմահ հոգու համար չէ ասուած:  
Վայելիների, վետի մէջ չէ կեանքը մեր,  
Այս մեր ուղին ունի եւ սուրբ նպատակ,  
Մեր ոյժի չափ սիրել, զործել բարիքներ,  
Եւ ամեն օր յառաջ գիտ անսայթար:  
Յառաջ, յոյսով, աշխարհի մէջ զործ շա՞ս կայ,  
Ժամանակը այնքան արազ է քոչում—  
Մեր խեղճ սիրտն էլ, քէպէս բաղխում է վստահ,  
Բայց մեր կրծքում բաղման երգ է մե՛րք հնչում:  
Ողջ աշխարհը կրուի դաշտ է մեզ անվերջ.  
Ընդդեմ բաղդի՛ նևմարտուքեան կրուի մէջ,  
Դու՝ մունջ սրբուկ, անկամք գրաստ մի՛ լինիր,  
Յառաջ գնա՛ եւ սուրբ մարտում քա՛ջ մեռիր:

Թո՞ղ ապագայ երազանքը հաճելի,  
Խսկ անցեալը մեռելներին քո՞ղ բաղէ...  
Ներկան է կեանի: Մարտնչողի նշմարին  
Նպատակն էլ ու կոչումն էլ ա'յդեղ է:  
Նրա գործը—օրինակ է ամենին,  
Որ կարող ենք անարդարը մենք յաղթել.  
Եւ մտնելով մութ գերեզման, քանիկազին  
Հետքեր քողնել: Եւ մահուանից յես ապրել:  
Եւ կեանի գոռ ալիքներից հալածուած,  
Գո՞ւցէ մի օր, մեր եղբայրը մոլորուած,  
Թարմ հետքերով նա կը գտնի այդ ուղին,  
Եւ կը զարթի նորից աշխոյժ վեհ հոգին:  
Դէ՞հ, վե՛ր կենանի, գործի զնանք մենք շուտով,  
Հերիք բնենք, արդէն ժամ է արքնութեան:  
Եւ քո՞ղ հոգին ապրի, գործի հաւատով—  
Յօդու բարու եւ նշմարտի յաղթութեան:

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ